

յոց մէջ: Այս վերջինին կողմէ Եաշի մէջ հրաւիրուած ժողով մը, 1840 Մարտ 3-ին, վաւերացուց Յակոբ Պըլբըլիուի կողմէ պատրաստուած ծրագիրը, որուն համաձայն համայնքը պիտի կառավարուէր վարչութենէ մը (Eforia) բաղկացած հինգ անդամներէ, — մէկը նախագահ՝ որ ներկայացուցիչն էր նաեւ համայնքին ու վերին հսկողը, երկրորդը պաշտօնունէր դպրոցները ղեկավարելու, երրորդը իրաւարար էր վէճի մը պարագային, չորրորդը կը զբաղէր այրիններու եւ որբերու հոգատարութեամբ ու այցելու հովիւներու հոգով, իսկ հինգերորդը կը մատակարարէր համայնքին շարժուն եւ անշարժ կալուածները: Մկրտիչ Պըլբըլիու նախագահ ընտրուեցաւ, իսկ Յակոբ Պըլբըլիու զոհացաւ նախագահութեան քարտուղարի դերով: Սոյն կանոնադրութիւնը Յակոբ Պըլբըլիու տարաւ Պոլիս ու վաւերացուց պատրիարքարանէն, Յակոբ պատրիարքի մասնաւոր կոնդակն ալ բերելով միասին: Այս յաջողութենէն յետոյ Յակոբ Պըլբըլիու վարչութեան մէջ ստանձնեց երկրորդ անդամի դերը եւ կազմեց դպրոցի մը յատկազօծը հանրային դպրոցներու ծրագրին վրայ, նախապատրաստական եւ բարձր կարգերով, ուր դասաւանդութեան միւս առարկաներու կարգին՝ պիտի աւանդուէր նաեւ հայ լեզուն, կրօնն ու պատմութիւնը: Ամուր հիմերու վրայ գնելու համար իր սկսած ձեռնարկը՝ Պըլբըլիու պէտք տեսաւ պետական վաւերացում ձեռք բերել: Այս աշխատանքին մէջ թանկագին աջակից մը եղաւ իրեն նշանաւոր դէմք մը Կէօրկէ Ասաքի, ծագումով հայ, որուն միջոցաւ էր որ դեռ նոր Միհայու Սթուրգա իշխանը հանրային կրթութիւնը կազմակերպէր էր Մոլտավիոյ իշխանապետութեան մէջ: Ասաքի, միեւնոյն ատեն, պետական հաշուեքննիչի (remerendar) պաշտօնը կը վարէր Հանրային կրթութեան Հոգարարձութեան մէջ: Ասաքիի միջնորդութեանը շնորհիւ Միհայու Սթուրգա իշխանը 1841 Նոյեմբեր 8 թուակիր հրովարտակով մը վաւերացուց հայ վարժարաններու ծրագիրը յայտարարելով թէ «իր պարաքն ըլլալով միօրինակ կրթութիւն մը տալ իր իշխանութեան տակ գտնուող բոլոր ժողովուրդներուն», «կը հրամայէ որ հանրային կրթութեան հոգարար-

ձութեան հսկողութեանը տակ բացուին հայ ազգային վարժարաններ՝ միւս հանրային վարժարաններու աստիճանով, եւ սակայն միւս առարկաներուն կարգին՝ տեղ տալով նաեւ հայոց լեզուն, կրօնին եւ պատմութեան»: Հայ դպրոցին աշակերտները այնուհետեւ իրաւունք պիտի ունենային մտնել «Արատէմիա Միհայլիանը», իսկ հայ վարչութեան կողմէ ընտրուած եւ Հանրային կրթութեան Հոգարարձութենէն վաւերացուած տնօրէնը մաս պիտի կազմէր Ակադեմիոյ քննիչներու դասին՝ միեւնոյն իրաւունքներով եւ պարտականութեամբ: Այս հրովարտակը՝ որ նոր կեանքի մը թուականը պիտի բանար հայերու համար՝ Եաշի եկեղեցիին մէջ մեծ հանդիսութեամբ կարգացուեցաւ 8 Նոյեմբերին, Հրեշտակապետաց տօնին օրը՝ որ տօնն էր նաեւ Միհայու Սթուրգա իշխանին:

Յակոբ Պըլբըլիու ընտրուեցաւ իրբեւ հայ դպրոցներու տնօրէն եւ իրբ այն վաւերացուեցաւ Հանրային կրթութեան Հոգարարձութենէն: Անոր իրաւասութիւնը կը տարածուէր Մոլտավիոյ ուրիշ քաղաքներուն թաղականութեանց եւ դպրոցներուն վրայ եւս, որոնք կախում ունէին մայրաքաղաքի (Եաշի) վարչութենէն՝ որ տեսակ մը կեդրոնական թաղականութիւնն էր իշխանապետութեան մէջ գտնուող բոլոր հայ համայնքներուն:

Պըլբըլիու չրաւականացաւ միայն պետական վաւերացման ենթարկելով հայ դպրոցներու ծրագիրը: Ան ձեռնարկեց նաեւ վաւերացրելու հայ համայնքին կանոնադրութիւնը, որ պատրաստուէր էր 1840-ին եւ զոր հաստատեր էր արդէն Պոլսոյ պատրիարքարանը: Հայ համայնքի վարչութեան կողմէ այդ առթիւ եղած դիմումի մը վրայ Հանրային կրթութեան Հոգարարձութիւնը յանձնարումը մը կազմեց Կէօրկ Սըուլխաբուէ եւ Յակոբ Պըլբըլիուէ՝ այս վերջինը նաեւ տնօրէն հայ վարժարաններու, պաշտօն տալով անոր հայ համայնքին կանոնադրութիւնը պատշաճեցնել հրովարտակով ստեղծուած կացութեան հետ, նախատեսելով նաեւ անհրաժեշտ բարեփոխութիւնները անոր բարեօք կիրարկութեանը համար: Այս կերպով մշակուեցաւ հրահանգ մը՝ իրբ յա-